

Մեր ուշադրութենէ վրիպելու չէ, որ եթէ այս թաղին աղաներուն դպչելու չըլլաք՝ թաղին բոլոր իրաւունքներն օտարի կ'ծախեն. իսկ եթէ դպչելու ըլլաք՝ ազգին իրաւունքներն օտարի կու տան. ահա դպչելու եւ չդպչելու տարբերութիւնն:

Փոքրիկ պատմութիւն մը ընենք հոս:

Բաւական տարիներ առաջ, տեղւոյն յոյները գերեզմանատուն չունենալով հոն՝ կը փափագին աժան գնով ծախու առնել գետին մը, ուր թաղել կ'ուզէին իրենց ննջեցեալները:

Թաղին քանի մը հայ աղաները յոյներու այս դիտաւորութիւնը լսելով՝ անոնց հետ բանակցութեան կ'մտնեն:

–Իմացանք, որ թաղիս մէջ տեղ մը կը փնտռէք եղեր ձեր ննջեցեալները թաղելու համար:

–Այո՛, անանկ միտք մը ունինք:

–Այս մասին մեր ձեռքէն եկած ծառայութիւնը չենք զլանար ձեզի. երկու եկեղեցիներն արդէն քոյրօղբայր են, իրարու շատ կ'նմանին, երկուորեակ են կարծես...

–Շնորհակալ ենք:

–Քոյրն եղբօրն վրայ կ'խենդենայ:

–Ողջ ըլլայ:

–Հսէ՛ք մեզի հիմայ, դուք ո՞ր կողմ կ'ուզէք գետին ունենալ:

–Մենք կ'ուզենք, որ ձեր գերեզմանատանը կէսը մերն ըլլայ:

–Այդ ըլլալու բան չէ, ատոր խօսքը մի՛ ընէք...

–Ինչո՞ւ. քոյրն իւր եղբօրն այս ծառայութիւնը չկրնա՞ր ընել:

–Անկարելի է:

–Ինչո՞ւ անկարելի ըլլայ. ատկէ դիւրին ի՞նչ կրնայ ըլլալ...

–Մեր գերեզմանատունն ի՞նչպէս ձերինը կրնայ ըլլալ...

–Գիշերուան մը մէջ մեր Պալըքլըյի գերեզմանատունէն գերեզմանաքարեր բերել կու տանք, կը դնենք, եւ հետեւեալ օրը կ'ըսէք, թէ յոյները մաս ունին եղեր մեր գերեզմանատան մէջ:

–Ատանկ բան մը կարո՞ղ ենք ընել:

–Կարո՞ղ էք հապա. դուք թաղին երեւելիներն էք, մեծերն էք. դուք ամբողջ թաղն ալ կրնաք ծախել:

–Հապա մեր խի՛ղճը...